Ուսուցչի ձեռնարկ

2

Թռուցիկ հայացք Աստվածաշնչին

Ներկայացնել Աստծո Խոսքը

Խմբային ուսուցումներ նորադարձ քրիստոնյաների համար

Թռուցիկ հայացք Աստվածաշնչին

Ներկայացնել Աստծո Խոսքը

Հեղինակ՝ Դեյվիդ Բեթթի

Ուսուցչի ձեռնարկ

5-րդ խմբագրում

ԽՈԼՆՔՀ
Խմբային Ուսուցումներ Նորադարձ Քրիստոնյաների Համար

Թռուցիկ հայացք Աստվածաշնչին

Ուսուցչի ձեռնարկ
5-րդ խմբագրում
Հեղինակ՝ Դեյվիդ Բեթթի

Եթե այլ կերպ նշված չէ, աստվածաշնչյան բոլոր մեջբերումներն արված են Trinitarian Bible Society (Tyndale House, Dorset Road, London, SW19 3NN, England)-ի կողմից կատարված ժամանակակից թարգմանությունից:

Բոլոր իրավունքները, ներառյալ ներկայացնելու կամ որևէ ձևով՝ ամբողջական կամ մասնակի, վերատպելու, պաշտպանված է Համաշխարհային հեղինակային իրավունքի կոնվենցիայով և մյուս կոնվենցիաներով, պայմանագրերով ու հռչակագրերով:

Այս դասընթացը սկզբում լույս է տեսել անգլերեն՝ A Quick Look at the Bible, 5th edition վերնագրով:

Այս նյութը կարող է վերատպվել և բաժանվել, որպեսզի օգտագործվի Թին Չելենջի, նմանատիպ ծրագրերի, տեղական եկեղեցիների, դպրոցների, այլ կազմակերպությունների և անհատների համար: Այս նյութերը նաև կարող են ներբեռնվել հետևյալ կայքից՝ www.iTeenChallenge.org: Նրանք, ովքեր կցանկանան վաճառել այս նյութերը, պետք է գրավոր թույլտվություն ստանան Գլոբալ Թին Չելենջից:

Այս դասընթացը *Խմբային Ուսուցումներ Նորադարձ Քրիստոնյաների Համար* դասընթացի մի մասն է, որը մշակվել է, որպեսզի օգտագործվի եկեղեցիներում, բանտային ծառայություններում, Թին Չելենջում և նմանատիպ ծառայություններում, որտեղ աշխատում են նորադարձ քրիստոնյաների հետ: Դասընթացի մեջ մտնում են՝ Ուսուցչի ձեռնարկը, Ուսանողի ձեռնարկը, Ուսուցման ուղեցույցը, Ստուգարքը և Վկայականը: Դրանց մասին առավել տեղեկություններ ստանալու համար դիմել.

Global Teen Challenge
PO Box 511
Columbus, GA, 31902 USA
Email: gtc@globaltc.org
Web: www.globaltc.org
www.iTeenChallenge.org

ԽՈՒՆՔՀ
Խմբային Ուսուցումներ Նորադարձ Քրիստոնյաների Համար

Վերջին անգամ վերանայվել է. 11-2017

Թռուցիկ հայացք Աստվածաշնչին

Այս դասընթացը տալիս է ընդհանուր գիտելիքներ ամբողջ Աստվածաշնչի վերաբերյալ: Առանցքային մտքերից մեկը, որ մենք ուզում ենք փոխանցել այս դասընթացի միջոցով, այն է, որ Աստվածաշունչն առանձնահատուկ գիրք է, այն Աստծո գիրքն է: Դու կարող ես վստահել նրան: Այն ճշմարիտ է: Նրա պատգամը չի փոխվում:

1 **Գլուխ 1. Ընդհանուր տեղեկություններ Աստվածաշնչի մասին**

Այս բաժինը ներառում է տեղեկություններ Աստվածաշնչի գրքերի քանակի, գրողների և գրվելու ժամանակի մասին: Մենք նաև քննարկելու ենք, թե ինչքանով է Քրիստոսը համապատասխանում ամբողջ Աստվածաշնչին:

2 **Գլուխ 2. Ինչպես է գրվել Աստվածաշունչը**

Այս դպսին մենք հետազոտելու ենք «ներշնչվածության» իմաստը: Ինչպե՞ս է Աստված ներշնչել մարդկանց գրել Աստվածաշունչը: Մենք նաև պարզաբանելու ենք, թե ինչպե՞ս է գրվել Աստվածաշունչը, ինչպե՞ս է այն փոխանցվել սերունդների միջոցով մինչև այսօր:

3 **Գլուխ 3. Ինչպե՞ս կարող եմ իմանալ, որ Աստվածաշունչն անսխալ (ճշմարիտ) է**

Այս գլուխը տալիս է հնարավորություն՝ հետազոտել փաստարկները, որոնք ապացուցում են, որ Աստվածաշունչը ճշմարիտ է:

4 **Գլուխ 4. Թռուցիկ հայացք Հին Կտակարանին**

Այս գլուխը Հին Կտակարանի վերաբերյալ համառոտ ակնարկ է:

5 **Գլուխ 5. Թռուցիկ հայացք Նոր Կտակարանին**

Հատուկ շեշտ է դրված Հիսուսի կյանքի և մարգարեությունների նպատակի վրա:

Ինչ է ներառված Ուսուցչի ձեռնարկում

Ուսուցչի ձեռնարկն ունի չորս բաժին: Յուրաքանչյուր բաժին առանձնացված է հիմնական վերնագրով.

1. Դասի ծրագրեր ուսուցչի համար,
2. Ուսանողի ձեռնարկ,
3. Ուսուցման ուղեցույց,
4. Ուսանողի ստուգարք, պատասխաններ և դասընթացի վկայական:

Բացատրությունը, թե ինչպես օգտագործել յուրաքանչյուր բաժինը, տրվում է անմիջապես տվյալ էջը ներկայացնելուց հետո:

Նախաբան

Այս դասընթացը մեկն է այն դասընթացներից, որոնք նախատեսված են նորադարձ քրիստոնյաների համար: Մենք հավատում ենք, որ այսօր մեծ կարիք կա օգնելու նորադարձ քրիստոնյաներին՝ Քրիստոսի ուսմունքը իրենց կյանքում գործնականորեն կիրառելու համար: Դասընթացները կարող են օգտակար լինել նաև եկեղեցու երիտասարդների և մեծահասակների ծառայության մեջ, ովքեր ուզում են քրիստոնեությունն իրենց ամենօրյա կյանքի առավել գործնական մասը դարձնել:

Այս դասընթացի և ամբողջ՝ *Խմբային ուսուցումներ նոր քրիստոնյաների համար* դասընթացի հիմնական նպատակն է՝ նորադարձ քրիստոնյաներին ներկայացնել նշանակալի, կյանքին վերաբերող հարցեր: Մենք չենք փորձում ներկայացնել այդ թեմաների սպառիչ ուսումնասիրությունները:

Թին Չելենջի՝ ԱՄՆ-ի ուսումնական ծրագրի կոմիտեն ծրագրում է շարունակել վերանայել այս դասերը: Մենք պատրաստ ենք ընդունել այս նյութերի զարգացման վերաբերյալ ձեր ունեցած ցանկացած քննադատություն կամ միտք:

Ինչպես օգտագործել Ուսուցչի ձեռնարկը

1. Դասերի ծրագրեր ուսուցչի համար

Այս բաժնի առաջին էջն ընդհանուր պատկերացում է տալիս ողջ դասընթացի վերաբերյալ:

Հաջորդ էջը *Դասարանական հանձնարարության ցուցակի* մի օրինակ է: Այն ցույց է տալիս, թե երբ պետք է Ուսուցման ուղեցույցի յուրաքանչյուր նախագիծ լրացվի և երբ յուրաքանչյուր հարցաշար և ստուգարք տրվի: Ուսուցման ուղեցույցներն արդեն ունեն այս ձևի չլրացված բլանկները հետևի կազմի ներսի կողմում:

Հաջորդը կլինի դասերի ծրագրերը յուրաքանչյուր դասի համար: Այս բոլոր դասերի ծրագրերն ունեն Աստվածաշնչյան բանալի ճշմարտություն և Բանալի համար: Դրանք կարող են տրվել դասի սկզբում: Դրանք նաև օգնում են քննարկումը պահել հիմնական թեմայի վրա ողջ դասի ընթացքում:

Ներքևում կան Աստվածաշնչյան բանալի ճշմարտության և Բանալի համարի մի քանի մեկնաբանություններ՝ թե ինչպես սովորեցնել դասը: Շատ դեպքերում հղումներ են արվում Ուսանողի ձեռնարկին կամ Ուսուցման ուղեցույցի նախագծերին:

Յուրաքանչյուր դաս ամփոփվում է «անձնական կիրառություն» քայլով: Սրա կարևորությունը չի կարող գերագնահատվել: Նորադարձ քրիստոնյաները կարիք ունեն հստակ առաջնորդություն ստանալու, թե ինչպես այս աստվածաշնչյան ուսուցումները կիրառեն իրենց ամենօրյա կյանքում: Համոզվա՛ծ

եղեք, որ բավականաչափ ժամանակ եք տալիս ձեր ուսանողներին, որպեսզի սկսեն այս անձնական կիրառման ընթացքը:

Յուրաքանչյուր դասի ծրագրի վերջում ուսանողի համար կա հանձնարարությունների ցուցակ:

Այս դասընթացներից շատերը նախատեսված են հինգ դասերի համար՝ յուրաքանչյուրը մեկ ժամ տևողությամբ: Այս բոլոր 14 դասընթացները կարելի է ավարտել 3-4 ամիսների ընթացքում, եթե դուք շաբաթական հինգ օր դասեր ունենաք: Եթե դուք ունենաք շաբաթական մեկ ժամ, ապա մեկ դասընթացը կարող եք ավարտել մեկ ամսում, իսկ ամբողջ շարքը՝ մոտ մեկ տարում: Այս դասերից շատերը հեշտությամբ կարելի է անցկացնել ավելի երկար ժամանակահատվածում կամ վերածել ավելի շատ դասերի:

2. Ուսանողի ձեռնարկ

Ուսանողի ձեռնարկը կարող է ծառայել երկու նպատակների: Դուք կարող եք հանձնարարել ուսանողներին՝ կարդալ համապատասխան էջերը՝ տրված դասին նախապատրաստվելու համար: Կամ էլ կարող եք հանձնարարել նրանց՝ այն կարդալ դասը անցկացնելուց հետո՝ վերանայելու և ամրացնելու այն, ինչ ուսուցանվեց դասարանում:

Մենք քաջալերում ենք, որ դուք ուսանողներին հանձնարարեք նշումներ անել դասարանում՝ չնայած այն բանին, որ նրանց տալիս եք Ուսանողի ձեռնարկը: Նրանց անձնական նշումները և դասարանական քննարկումները կօգնեն պարզաբանել Ուսանողի ձեռնարկի որոշ թեմաներ:

3. Ուսուցման ուղեցույց

Ուսուցման ուղեցույցի նախագծերը նախատեսված են ուսանողներին դասասենյակից դուրս աշխատանքով ապահովելու համար: Որոշ նախագծեր կօգնեն ուսանողներին նախապատրաստվել հաջորդ քննարկմանը:

Նախագծերից շատերը նախատեսված են ուսանողներին օգնելու համար, որպեսզի ավելի խորը ուսումնասիրեն դասարանում քննարկված որոշ թեմաներ: Այս հանձնարարությունների հիմնական նպատակն է՝ օգնել ուսանողներին բացահայտել, թե ինչպես աստվածաշնչյան ճշմարտությունները կիրառեն իրենց ամենօրյա կյանքում:

4. Ուսանողի ստուգարք և Ստուգարքի պատասխաններ

Ստուգարքները նախատեսված են պարզ կերպով գնահատելու համար յուրաքանչյուր ուսանողի առաջընթացը՝ դասընթացի ժամանակ անցած աստվածաշնչյան ճշմարտությունները հասկանալու հարցում: Ստուգարքի պատասխանները գտնվում են այս Ուսուցման ձեռնարկի՝ ուսանողի ստուգարքի նմուշի վերջին էջից անմիջապես հետո:

5. Դասընթացի վկայական

Դասընթացի վկայականը որպես գնահատանք պետք է տրվի նրանց, ովքեր կավարտեն դասընթացի համար պահանջվելիք ամբողջ աշխատանքը և բարեհաջող կհանձնեն ստուգարքը: Դասընթացի վկայականը գտնվում է Ուսուցչի ձեռնարկի վերջին էջում: Ավարտական վկայական կարող է տրվել նաև այն ուսանողներին, ովքեր կավարտեն *Խմբային ուսուցումներ նորադարձ քրիստոնյաների համար* ձեռնարկի բոլոր 14 դասընթացների շարքը: Նմուշը ներառված է «Ուսուցիչներին ներկայացնել խմբային ուսուցումներ նորադարձ քրիստոնյաների համար» գրքում:

Դասընթացների ակունքները

Սողոմոնն ասաց, որ արևի տակ նոր բան չկա: Նույնը կարելի է ասել նաև այս դասերի մասին: Այս մտքերից շատերը նոր չեն: Մենք ուզում ենք արտահայտել մեր հատուկ գնահատականը *Կյանքի հիմնական սկզբունքների ինստիտուտին* այն ազդեցության համար, որ նրանք ունեցել են այս նյութերը մշակող մարդկանց վրա: Այս դասերից շատերը կրում են *Կյանքի հիմնական սկզբունքների ինստիտուտի* հետքերը:

Ես նաև ուզում եմ արտահայտել իմ խորին երախտագիտությունն այն բազմաթիվ ուսուցիչներին ու հազարավոր նորադարձ քրիստոնյաներին, ովքեր օգտագործել են այս նյութերը վերջին մի քանի տարիների ընթացքում: Նրանց տված գաղափարները մեծ դեր են խաղացել այս դասընթացների մշակման մեջ: Ես նաև շատ երախտապարտ եմ Դոն Վիլկերսոնին, որն ինձ հնարավորություն տվեց աշխատել Բրուկլինում (Նյու Յորք) 1971-1975 թվականներին: Այդ տարիներին էր, որ *Խմբային ուսուցումներ նորադարձ քրիստոնյաների համար* շարքի մշակումն առաջին անգամ սկսվեց:

Խմբային ուսուցումներ նորադարձ քրիստոնյաների համար դասընթացների հինգերորդ խմբագրումը մշակվել է Թին Չելենջի՝ ԱՄՆ-ի Ուսումնական ծրագրի կոմիտեի օգնությամբ: Հատուկ շնորհակալություն բոլոր նրանց, ովքեր աջակցել են այդ վերանայման գործընթացին:

Այս նյութերը վերատպելու վերաբերյալ մոտեցումը

Ուսուցչի ձեռնարկը, ինչպես նաև ուսանողական մյուս բոլոր նյութերը, որոնք վերաբերում են *Խմբային ուսուցումներ նորադարձ քրիստոնյաների համար* դասընթացներին, պաշտպանված են հեղինակային իրավունքով: Այս նյութերը կարող են վերատպվել և բաժանվել օգտագործելու նպատակով Թին Չելենջում, նմանատիպ ծրագրերում, տեղական եկեղեցիներում, դպրոցներում և այլ կազմակերպություններում, ինչպես նաև անհատների համար: Այս նյութերը նաև կարող են ներբեռնվել համացանցում հետևյալ կայքից՝ www.iTeenChallenge.org: Սակայն այս նյութերը չեն կարող վաճառվել, այլ միայն՝ անվճար բաժանվել: Նրանք,

ովքեր ուզում են տպագրել և վաճառել դրանք, պետք է գրավոր թույլտվություն ձեռք բերեն Գլոբալ Թին Չելենջից:

Խորհուրդ է տրվում ուսուցման հետևյալ հերթականությունը

Այս դասընթացը *Խմբային ուսուցումներ նորադարձ քրիստոնյաների համար* շարքի 14 ուսուցումներից մեկն է: Բոլոր 14 դասընթացները այստեղ ներկայացված են ուսուցման՝ խորհուրդ տրված հերթականությամբ: Հերթականության ցանկը մշակվել է դասընթացների շարունակական ուսուցման համար: Ավելի լավ կլինի այն ձևել 14 ճաղեր ունեցող անիվի նման: Այս դասընթացները կառուցված չեն մեկը մյուսի վրա: Ամեն մեկն առանձին է: Այնպես որ, ուսանողները կարող են միանալ դասերին ցանկացած կետում և շատ հեշտությամբ հարմարվել:

1. Ինչպե՞ս կարող եմ վստահ լինել, որ ես ճշմարիտ քրիստոնյա եմ:
2. Թռուցիկ հայացք Աստվածաշնչին:
3. Վերաբերմունքներ:
4. Փորձություններ:
5. Հաջողակ քրիստոնեական կենսակերպ (ներառում է դասեր Սուրբ Հոգու ծառայության վերաբերյալ):
6. Աճել ձախողումների միջոցով:
7. Քրիստոնեական պրակտիկա (շփում տեղական եկեղեցու հետ):
8. Հնազանդություն Աստծուն:
9. Հնազանդություն մարդուն:
10. Բարկություն և անձնական իրավունքներ:
11. Ինչպե՛ս ուսումնասիրել Աստվածաշունչը:
12. Սեր և ինքնաընդունելություն:
13. Անձնական փոխհարաբերություններ մարդկանց հետ:
14. Հոգևոր զորություն և գերբնականը:

Այս դասընթացների ուսուցման նպատակով լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս *«Ուսուցիչներին ներկայացնել խմբային ուսուցումներ նորադարձ քրիստոնյաների համար»* գիրքը:

Դասի ծրագրեր
ուսուցիչների համար

Ստուգի՛ր սույն Ուսուցչի ձեռնարկի 4-րդ էջը՝ դասի ծրագրերն օգտագործելու վերաբերյալ ավելի շատ տեղեկություն ստանալու համար:

Դասընթացի վերանայում

1. Եթե հնարավոր է, բաժանե՛ք *Ուսանողի ձեռնարկը* և *Ուսուցման ուղեցույցը* ՝ այս դասընթացի դասերն սկսելուց մեկ կամ երկու օր առաջ:
2. Սույն Ուսուցչի ձեռնարկի 12-րդ էջում կա *Դասարանական Հանձնարարության Ցուցակի* մի օրինակ, որը ներկայացնում է ամսաթվերը, թե երբ պետք է յուրաքանչյուր հանձնարարություն կատարվի: Թող ուսանողները լրացնեն համապատասխան ամսաթվերը՝ օգտագործելով իրենց *Ուսուցման ուղեցույցի* վերջում եղած Դասարանական հանձնարարության ցուցակի դատարկ օրինակները:
3. *Ուսանողի ձեռնարկի* 19-րդ էջում կա Նոր Կտակարանի գրքերի և դրանց բաժանումների ցանկը: Ասա՛ ուսանողներին, որ օգտագործեն այն՝ սույն դասընթացի հարցաշարին նախապատրաստվելու համար:
4. Այս դասընթացն ուսուցանելիս աշխատի՛ր կենտրոնանալ այն բանի վրա, թե ինչո՛ւ մենք այսօր ունենք Աստվածաշունչը:
   Ա. Աստվածաշունչը չի գրվել որպես ամբողջ աշխարհի պատմության դասագիրք: Աստվածաշունչը պարունակում է բավականին մեծ քանակի պատմական տեղեկություններ, սակայն դա չէ հիմնական պատճառը, թե ինչո՛ւ է Աստված ցանկացել, որ այն գրվի:
   Բ. Աստվածաշունչը չի գրվել ապագան գուշակելու համար:
   Գ. Ես կարիք ունեմ օգտագործելու Աստվածաշնչի ուսուցումները՝ Աստծուն ավելի մոտենալու համար:
   Դ. Աստվածաշունչն ինձ համար պետք է լինի մի դասագիրք՝ իմ ամենօրյա իրավիճակների մեջ ինձ ուղղորդելու համար:

   Շարունակ վերադարձի՛ր Գ. և Դ. կետերին ողջ դասընթացի ժամանակ: Այս կետերը կարող են քեզ օգնել, եթե վիճաբանություն առաջանա այն մասին, թե որոնք են լավագույն թարգմանությունները և վերաձևակերպումները:
5. Մի՛ տրվիր գայթակղությանը՝ պատմելու այն ամենը, ինչ դու գիտես այս թեմայի վերաբերյալ: Մեր նպատակն այստեղ այն ողջ նյութը ներկայացնելը չէ, որ որևէ քոլեջի դասընթաց կարող էր պարունակել *Աստվածաշնչի հետազոտություն #101*-ում: Մենք այստեղ ընդամենն ուզում ենք հիմնական գիտելիքներ տալ ուսանողներին և ուղղորդել այնտեղ, որտեղ նրանք կկարողանան ինքնուրույն կատարել իրենց հետագա ուսումնասիրությունը:
6. Մի հանգամանք, որ կարող է բազմազանություն մտցնել այս դասընթացի մեջ, յուրաքանչյուր դասի ժամանակ ուսանողներին Աստվածաշնչի ուսումնասիրության տարբեր միջոցներ ներկայացնելն է: Մի քանի միջոցներ, որոնք դու կարող ես ընտրել, հետևյալներն են. աստվածաշնչյան ատլաս, մեկնաբանություն, համաբարբառ, մի քանի ուսումնական Աստվածաշնչերի թարգմանությունների շղթայական հղումներ, աստվածաշնչյան բառարան և աստվածաշնչյան ձեռնարկ: Սույն դասի ծրագրերի շրջանակներում այս առաջարկության հետ կապված ոչ մի հետագա հղումներ այլևս չեն արվի:

Դասարանական հանձնարարության ցուցակ

Դասընթացի անվանումը Թռուցիկ հայացք Աստվածաշնչին

Հարցաշարեր

Հետևյալ ամսաթվերին քեզ կտրվի հարցաշար Նոր Կտակարանի գրքերի և բաժանումների վերաբերյալ: Քեզ կտրվի դատարկ թուղթ, որի վրա պետք է գրես բաժանումները և յուրաքանչյուր բաժանման մեջ եղած գրքերը:

Ամսաթիվ օր 1. Հարցաշար Ավետարանների և եկեղեցու պատմության վերաբերյալ:

Ամսաթիվ օր 2. Հարցաշար Ավետարանների, Գործքի և Պողոսի նամակների վերաբերյալ:

Ամսաթիվ օր 3. Հարցաշար Նոր Կտակարանների բոլոր գրքերի և դրանց բաժանումների վերաբերյալ:

Նախագծեր Վերնագիր	Համապատասխան ամսաթիվը
1. Մովսեսի գրքերը	օր 1.
2. Պատմական գրքեր	օր 2.
3. Քնարական գրքեր	օր 2. ընտրությամբ
4. Մեծ մարգարեներ	Ըստ ընտրության
5. Փոքր մարգարեներ	օր 3.
6. Ավետարանները և եկեղեցու պատմությունը	օր 4.
7. Պողոսի նամակները	Ըստ ընտրության
8. Ընդհանրական նամակները և մարգարեության գիրքը	օր 5.

Ստուգարք Ամսաթիվ օր 5.

Դաս 1.
Ինչո՞ւ մենք ունենք Աստվածաշունչը

1

1. **Աստվածաշնչյան բանալի ճշմարտություն:**

Ես կարիք ունեմ հստակ հասկանալու, թե ինչո՞ւ մենք ունենք Աստվածաշունչը:

2. **Հիմնական համարներ. Ա Պետրոս 2:2.**

«Նորածին մանուկների պես փափագեցե՛ք Խոսքի բանական և անխարդախ կաթը, որ դրանով աճեք»:

3. **Հղում ուսանողական նյութերին:**

Ուսանողի ձեռնարկի 1-ին գլուխը համապատասխանում է այս դասին:

4. **Դասի ջերմացում (5-10 րոպե):**

Ընտրի՛ր հետևյալ չորս վարժություններից մեկն այս դասը ներկայացնելու համար:

Ա. **Ներկայացրո՛ւ Աստվածաշնչի տարբեր թարգմանություններ:** Եթե հնարավոր է, ունեցի՛ր եբրայերեն Հին Կտակարանի և հունարեն Նոր Կտակարանի մեկական օրինակ:

Բ. Հարցրո՛ւ. «**Եթե դուք լինեիք Աստծո փոխարեն** և ցանկանայիք մի գիրք գրել մարդկանց համար, ի՞նչ եք կարծում, ո՞րը կլիներ ամենակարևոր բանը, որը դուք կուզենայիք գրել այդ գրքում»: Դու կարող ես ամբողջ դասարանը ներգրավել այս հարցի քննարկման շուրջ: Կամ էլ կարող ես դասարանը բաժանել 2-4 հոգանոց փոքր խմբերի և քննարկել այն:

Գ. Տո՛ւր այս հարցերը.

Ի՞նչ ես հիշում քո մանկությունից՝ կապված Աստվածաշնչի հետ:
Դուք տանն Աստվածաշունչ ունեի՞ք:
Դու երբևէ կարդացե՞լ էիր այն:
Ի՞նչ էին պատմում քեզ քո ծնողները կամ տատիկներն ու պապիկներն Աստվածաշնչի մասին:

Դու կարող ես դասը սկսել՝ քաջալերելով ուսանողներին՝ այս հարցին իրենց պատասխաններով ողջ դասարանի հետ կիսվելու առումով: Կամ կարող ես դասարանը բաժանել 3-5 հոգանոց փոքր խմբերի և քննարկել այդ հարցերը:

1

Դ. **Isaac Air Freight,** “Let’s Trade Your Salvation.” (Մանրապատում է անգլերեն)

5. Հիմնական փաստեր Աստվածաշնչի վերաբերյալ (5-10 րոպե):

Անցկացրո՛ւ Ա. կետը. *«Հիմնական փաստեր Աստվածաշնչի վերաբերյալ»:* Տե՛ս *Ուսանողի ձեռնարկի* 5-6-րդ էջերն այս տեղեկության համար: Առաջին երեք կետերը բավականին արա՛գ անցիր:

6. Աստվածաշնչի բնօրինակ լեզուները (5-10 րոպե):

Երբ քննարկելիս լինեք, թե որ լեզուներով է Աստվածաշունչը սկզբում գրվել, դու կարող ես, ըստ քո ցանկության, նրանց ցույց տալ եբրայերեն Հին Կտակարանի և հունարեն Նոր Կտակարանի օրինակները: Եթե ձեր գրադարանում այդպիսի օրինակներ չկան, ստուգե՛ք համացանցում կամ մոտակա եկեղեցիներում, սեմինարիաներում կամ հանրային գրադարաններում:

Անպայման բացատրի՛ր, թե ինչո՛ւ է Հին Կտակարանը գրվել եբրայերեն, իսկ Նոր Կտակարանը՝ հունարեն: Սրանք այն հիմնական լեզուներն էին, որոնք այն ժամանակ սովորական մարդիկ օգտագործում էին, երբ գրվում էին Աստվածաշնչի գրքերը: Սա է նաև պատճառը, որ Հին Կտակարանի վերջին մի քանի գրքերի որոշ մասեր գրվել են արամերեն:

7. Աստվածաշնչի թարգմանություններ (5-10 րոպե):

Սա կարող է հարմար ժամանակ լինել՝ համառոտ ներկայացնելու քո մայրենի լեզվով արված թարգմանությունների մասին համապատասխան կետը: Եթե այսօրվա դրությամբ քո մայրենի լեզվով կան մեկից ավելի թարգմանություններ, ապա դու կարող ես դրանցից մեկական օրինակ բերել այսօրվա դասին: Բացատրի՛ր, որ մեկից ավելի թարգմանություններ ունենալու հիմնական պատճառն այն է, որ թարգմանիչներն ուզում են Աստվածաշնչի ճշգրիտ թարգմանություն ներկայացնել սովորական մարդկանց գործածական լեզվով:

Եթե դու ունես մի թարգմանություն, որն ամենահինն է քո մայրենի լեզվով, հնարավոր է, այն դժվար հասկանալի լինի, եթե անգամ շատ քրիստոնյաներ օգտագործում են այն: Մատնանշի՛ր, որ Աստվածաշունչը գրվել է շատ վաղուց՝ տասնյակ դարեր առաջ՝ տվյալ ժամանակների համար միանգամայն հասկանալի լեզվով, որը, սակայն, այսօր արդեն որպես հին ու դժվար ընկալվող լեզու է: Եվ պարզ է պատճառը, թե ինչու են շատ մարդիկ դժվարանում հասկանալ այդ հին լեզուն. մեր այսօրվա լեզուն փոխվել է: Այլ խոսքով՝ Աստվածաշնչի առաջին թարգմանությունները ունեին այն լեզուն, որը տվյալ ժամանակի հասարակ ժողովուրդն օգտագործում էր և հեշտությամբ հասկանում:

Հնարավոր է՝ դու նաև ցանկանաս ցույց տալ Սեպտուագենտի մի օրինակ, որը Հին Կտակարանի հունարեն թարգմանությունն է: Այն Հիսուսի երկրավոր կյանքի ընթացքում Իսրայելում լայնորեն օգտագործվում էր:

Զգո՛ւյշ եղիր, որ չթաղվես թարգմանությունների վերաբերյալ տեխնիկական քննարկումների մեջ: Պահի՛ր այն հետագայի համար: Այս պահին մենք ուզում ենք ընդհանուր գիտելիքներ տալ Աստվածաշնչի վերաբերյալ:

Որոշելը, թե աստվածաշնչյան ո՛ր թարգմանությունն է լավագույնը, այն հիմնական աստվածաշնչյան ճշմարտությունը չէ, որը մենք ցանկանում ենք փոխանցել այսօր: Դրա փոխարեն ժամանակը օգտագործի՛ր, որպեսզի շեշտես, թե ինչո՛ւ մենք այսօր Աստվածաշունչն ունենք մեր լեզվով:

Մատնանշի՛ր, որ Աստված ավելի շատ հետաքրքրված է այն բանում, որ մենք Աստվածաշնչի ճշմարտությունները կիրառենք մեր առօրյա կյանքում, քան թե նրանում, թե աստվածաշնչյան ո՛ր թարգմանությունն ենք մենք կարդում: Այդ ամենն արտահայտելու մեկ այլ կերպ էլ սա է.

Աստվածաշնչի լավագույն թարգմանությունն այն մեկն է, որը դու *կիրառում* ես առօրյա կյանքում:

8. Աստվածաշնչի մեկությունը և շարունակական հայտնությունը (5-10 րոպե):

Անցկացրո՛ւ Բ. կետը՝ *«Աստվածաշնչի մեկությունը»*, և Գ. Կետը՝ *«Տեսնելով ամբողջ պատկերը (շարունակական հայտնություն)»*: Տեղեկությունների համար տե՛ս Ուսանողի ձեռնարկի 6-7-րդ էջերը, որպեսզի ներկայացնես այն: Կարիք չկա, որ դու այս երկու կետերի վերաբերյալ շատ խորանաս մանրամասնությունների մեջ:

Գ. կետն ասում է այն մասին, որ մենք պետք է զգույշ լինենք՝ տեսնելով ամբողջ պատկերը, երբ Սուրբ Գիրք ենք կարդում: Համառոտ բացատրի՛ր մի քանի խնդիրներ, որոնք առաջանում են «համարը համատեքստից դուրս հանելու» պատճառով: Բացատրի՛ր, թե մենք ինչ նկատի ունենք դա ասելով:

9. Ինչքանո՞վ է Քրիստոսը համապատասխանում ամբողջ Աստվածաշնչին (5 րոպե):

Օգտագործի՛ր Ուսանողի ձեռնարկի 7-րդ էջի տեղեկությունը, որպեսզի անցկացնես Դ. Կետը՝ «Ինչքանո՞վ է Քրիստոսը համապատասխանում ամբողջ Աստվածաշնչին»:

Այնպե՛ս արա, որ նրանք հասկանան, որ Հիսուս Քրիստոսի հարությունը Աստվածաշնչում գրանցված ամենակարևոր դեպքն է: Դասի այս բաժինը հեշտությամբ կարելի է կապել այս դասի Աստվածաշնչյան բանալի ճշմարտության հետ:

1

10. Ինչպե՞ս են հաշվվում տարիները (5 րոպե):

Օգտագործի՛ր *Ուսանողի ձեռնարկի* 7-8-րդ էջերի տեղեկությունը՝ անցկացնելու համար Ե. Կետը՝ *«Ինչպե՞ս են հաշվվում տարիները»:*

Քո ուսանողներից որոշները, հնարավոր է, շատ քիչ տեղյակ լինեն հին աշխարհի պատմությունից: Հեշտ է բացատրել, որ Հին Կտակարանը գրվել է Հիսուսի ծննդից առաջ, իսկ Նոր Կտակարանը՝ Հիսուսի ծննդից հետո: Բայց և այնպես, քո ուսանողների մի որոշ մաս, հնարավոր է, չհասկանա, թե ինչպես էին մարդիկ հաշվում տարիները նախքան Հիսուսի ծնունդը:

Երբ քո ուսանողներն ավելի խորանան աստվածաշնչյան ժամանակների ուսումնասիրության մեջ, նրանք կարիք կունենան հստակ պատկերացում կազմելու այս հաշվարկային համակարգի վերաբերյալ:

11. Անձնական կիրառում (5 րոպե):

Ցանկության դեպքում դու կարող ես վերանայել Աստվածաշնչյան բանալի ճշմարտությունը և Բանալի համարը՝ դասն ամփոփելու ժամանակ: Թող յուրաքանչյուր ուսանող խորհի այս հարցերի շուրջ.

- Ինչո՞ւ է Աստված մեզ տվել Աստվածաշունչը:
- Ինչո՞ւ եմ ես ուզում Աստվածաշունչ ունենալ:
- Ինչպե՞ս եմ ծրագրում օգտագործել Աստվածաշունչն իմ կյանքում:
- Ինչպե՞ս կպատասխանեմ Աստվածաշնչի ուսուցումներին:

Նրանք պետք է տեսնեն, որ Աստվածաշունչն Աստծո նամակն է մեզ համար: Նա կխոսի մեզ հետ Իր գրված խոսքի միջոցով:

12. Հանձնարարություններ:

Ա. Տո՛ւր առաջին հարցաշարը:

Բ. Գնահատակա՛ն դիր Ուսուցման ուղեցույց Նախագիծ 1-ինի՝ *«Մովսեսի գրքերը»* բաժնի համար:

Գ. Եթե դեռ չես արել, բաժանի՛ր *Ուսանողի ձեռնարկը* և *Ուսուցման ուղեցույցը* դասի սկզբում:

Դ. Հանձնարարի՛ր ուսանողներին կարդալ *Ուսանողի ձեռնարկի* 1-ին գլուխը՝ այսօրվա դասին քննարկված թեմաները վերանայելու համար:

Ե. Թող ուսանողները կարդան *Ուսանողի ձեռնարկի* 2-րդ գլուխը հաջորդ դասին նախապատրաստվելու համար:

13. Դասի գնահատում:

Խնդրում եմ, գրի՛ր մտքեր այս դասի բարելավման համար:
Ո՞ր հատվածներն էին լավագույնս աշխատում:
Ո՞ր մասերն էին ուսանողների համար դժվարհասկանալի:
Ի՞նչն ամենաօգտակարը թվաց քո ուսանողներին:

2

Դաս 2.
Աստվածաշունչը ներշնչված է

1. **Աստվածաշնչյան բանալի ճշմարտություն:**

Քանի որ Աստվածաշունչը ներշնչված է, ես պետք է այն օգտագործեմ այնպես, ինչպես Աստված է ինձ ասում:

2. **Բանալի համար. Բ Տիմոթեոս 3:16.**

Ամբողջ Գիրքը Աստծո շունչն է և օգտակար՝ վարդապետության, հանդիմանելու, ուղղելու և արդարությամբ խրատելու համար:

3. **Հղում ուսանողական նյութերին:**

Ուսանողի ձեռնարկի 2-րդ գլուխը համապատասխանում է այս դասին:

4. **Դասի ջերմացում (5 րոպե):**

Ընտրի՛ր հետևյալ վարժություններից մեկը կամ երկուսն էլ՝ դասը ներկայացնելու համար: Եթե դու մանրապատում ես օգտագործելու, ապա կարիք կունենաս նախապես ընտրել ուսանողներին և տալ նրանց իրենց դերերը:

Ա. Նամակներ պարկում:

Քեզ պետք կլինի մի խաղ, որը տառեր ունի: Տառերը լցրո՛ւ փոքրիկ պարկի մեջ և թափահարի՛ր այն: Հետո բոլոր տառերը դատարկի՛ր պարկից: Տարածի՛ր տառերն այնպես, որ դրանք միմյանց վրա չլինեն: Առանց տառերը վերադասավորելու տե՛ս, թե քանի բառեր և նախադասություններ են կազմվել: Հնարավոր է՝ ոչ մի հատ չգտնես:

Օգտագործի՛ր այս փոքրիկ առարկայական դասը, որպեսզի բացատրես, որ Աստվածաշունչը պատահականորեն չի ձևավորվել: Մի անձնավորություն՝ Աստված, ծրագրավորել է այն և գործի դրել տարբեր մարդկանց՝ կատարելու համար այդ աշխատանքը:

Բ. Մանրապատում «նոր լրագրողների» համար:

Ասա՛ ուսանողներին, որ նրանք ականատես են լինելու երկու մարդկանց հանդիպման: Նրանք պետք է լրագրողների դեր խաղան, և երբ ներկայացումը վերջանա, պետք է գրի առնեն այն ամենը, ինչ տեղի է ունեցել: Նրանք չպետք է համեմատեն իրենց գրածները, քանի դեռ բոլորը չեն վերջացրել:

Մանրապատումի համար թող երկու անձնավորություններ սենյակ մտնեն հակառակ կողմերից և հանդիպեն մեջտեղում։ Թող նրանցից մեկը շատ ընկերական վարվի և ասի. «Բարև՛։ Ինչպե՞ս ես», կամ՝ ընկերական այլ ողջույն։ Իսկ մյուս անձնավորությունը թող ներս գա խոժոռ հայացքով։ Նա չպետք է ոչ մի լավ բան ասի՝ ի պատասխան առաջին անձնավորության ողջույնին։ Դրանից հետո նրանք պետք է հեռանան։

Նորից ուսանողներին ասա՛, որ գրեն իրենց տեսածը՝, ինչ որ տեղի ունեցավ։ Այս պահին ոչ մի քննարկում կամ խոսակցություն թույլ մի՛ տուր։ Երբ նրանք վերջացնեն իրենց աշխատանքը, խնդրի՛ր, որ ամեն մեկը կարդա իր գրածը։ Ակնհայտ է, որ նրանց գրածները միանման կլինեն, սակայն ոչ մեկը մյուսի հետ բացարձակ, այսինքն՝ բառ առ բառ սկզբից մինչև վերջ նույնը չի լինի։

Օգտագործի՛ր նրանց գրածները, որպեսզի նկարագրես, թե ինչպես է Աստված օգտագործել տարբեր մարդկանց՝ գրել Աստվածաշնչի 66 գրքերը։ Այսօր մենք պատրաստվում ենք տեսնել, թե ինչպես է Աստված իրականացրել այս հսկայածավալ գործը։

5. Ներշնչում. ի՞նչ է դա նշանակում (5-10 րոպե)։

Քո առաջնային նպատակն այսօր նրանց օգնելն է, որպեսզի հստակորեն հասկանան, թե ինչ է նշանակում «ներշնչում»։ Թող ուսանողներից մեկը բառարանում գտնի և կարդա այդ բառի սահմանումը։

Ներշնչել *(Webster's Intermediate Dictionary)*

(1) շարժել, ուղղորդել կամ հաղորդակցվել աստվածային կամ գերբնական ազդեցությամբ. «Աստծուց ներշնչված մարգարեներ», «Աստծուց ներշնչված մտքեր»։

(2ա) թողնել կենդանացնող, ապրեցնող կամ ոգևորող ազդեցություն. «մորից ներշնչված»։

(2բ) մղել. «Մանկությունը նրան ներշնչել էր կրթության»։

(2գ) ներդնել կամ ներկայացնել մտքի մեջ, ոգեշնչել. «Վստահություն է ներշնչում իր հետևորդների մեջ»։ Մի քանի օրինակնե՛ր բերեք, թե ինչպես ենք մենք այս բառն օգտագործում առօրյա սովորական խոսակցությունների ժամանակ։

- Մայրամուտը ներշնչում է նկարչին՝ նկարել։
- Քաղաքական առաջնորդը ներշնչում է ամբոխին իր հզոր խոսքով։
- Գիրք կարդալը ներշնչում է երիտասարդին՝ հետևել իր հերոսին։

Երբ մենք ասում ենք, որ Աստված ներշնչել է մարդկանց՝ գրել Աստվածաշնչի գրքերը, ի՞նչ նկատի ունենք: Մենք խոսում ենք միանգամայն այլ բանի մասին, քան մայրամուտն է, քաղաքական առաջնորդը կամ գիրքը:

2

6. Աստվածաշնչի ներշնչվածությունը (5-10 բոպե):

Թող ուսանողները բացեն և կարդան Բ Տիմոթեոս 3:16 և Բ Պետրոս 1:20-21: Կարդա՛ այն ինչքան հնարավոր է՝ տարբեր թարգմանություններից: Տե՛ս *Ուսանողի ձեռնարկի* 9-10-րդ էջերը՝ այս կետի վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար:

Ի մի՛ բեր ձեր հայտնաբերածները, տո՛ւր նրանց աստվածաշնչյան ներշնչման սահմանումը, որը գրված է *Ուսանողի ձեռնարկի* 10-րդ էջում:

Երբ ասում ենք, որ «Աստվածաշունչը ներշնչված է Աստծուց», մենք նկատի ունենք.

Սուրբ Հոգին ուղղորդել է գրողների մտքերը, որպեսզի նրանք գրեն այն, ինչ Աստված էր ուզում, որ նրանք գրեն:

7. Ներշնչման վերաբերյալ պլակատ:

Մի մեծ ստվարաթղթի վրա գրի՛ր աստվածաշնչյան ներշնչման վերաբերյալ՝ *Ուսանողի ձեռնարկի* 10-րդ էջի սահմանումները և կախի՛ր այն քո դասասենյակում, որտեղ դու կարող ես մի քանի անգամ դրան հղում անել դասաժամի ընթացքում:

Ընդգծի՛ր *Ուսանողի ձեռնարկի* 10-րդ էջի հետևյալ միտքը.

«Կարևոր է հասկանալ, որ *ամբողջ* Աստվածաշունչն է ներշնչված: Բոլոր գրքերը հավասարապես են ներշնչված Աստծո կողմից: Աստվածաշնչում ոչ մի գիրք «ավելի ներշնչված» չէ Աստծո կողմից, քան մյուսները»:

8. Ինչպե՞ս է Աստված ներշնչել մարդկանց՝ գրել Աստվածաշնչի գրքերը (10-20 բոպե):

Անցկացրո՛ւ *Ուսանողի ձեռնարկի* 10-11-րդ էջերի երեք կետերը, որոնք բացատրում են, թե ինչպես է Սուրբ Հոգին ներշնչել մարդկանց՝ գրել Աստվածաշնչի գրքերը: Երբ քննարկեք երրորդ կետը՝ *«Սուրբ Հոգին նրանց տալիս էր մտքեր, որոնք գրողներն իրենց ուրույն ձևով էին արտահայտում»,* կրկին վերադարձե՛ք դասի բացման գործողությանը, այն է՝ մանրապատում «նոր լրագրողների» համար:

Մատնանշի՛ր, որ Աստվածաշնչի յուրաքանչյուր գրող ունեցել է իր ուրույն գրելաոճը: Բայց և այնպես, Աստված հստակորեն ուղղորդել է նրանց մտքերը, որպեսզի նրանք չգրեն սխալ տեղեկություններ, որոնք Աստված չէր ուզենա տեսնել Աստվածաշնչում:

9. Ինչպե՞ս են սկզբում գրվել Աստվածաշնչի գրքերը (5-10 րոպե):

Ուսանողի ձեռնարկի 11-րդ էջը տալիս է հիմնական տեղեկություններ այստեղ անցկացնելու համար: Հստակ նշե՛ք, որ Աստվածաշնչի առաջին բոլոր բնօրինակները վերացել են: Մենք հիմա ունենք միայն այդ գրքերի ամենահին պատճենները:

2

10. Ինչպե՞ս են արվել Աստվածաշնչի գրքերի պատճենները (5-10 րոպե):

Ներկայացրո՛ւ *Ուսանողի ձեռնարկի* 11-րդ էջի 2-րդ ենթակետը. *«Ինչպե՞ս են արվել Աստվածաշնչի գրքերի պատճենները»:* Եթե ինչ-որ կերպ հնարավոր է, դասարա՛ն բերեք այդ գալարների լուսանկարները: Մեռյալ ծովի գալարների վերաբերյալ գրքեր այսօր շատ կան: Հանրագիտարանների մեծ մասը նույնպես պարունակում է տեղեկություններ այդ գալարների վերաբերյալ:

Դու, ցանկության դեպքում, կարող ես նրանց լրացուցիչ տեղեկություններ հաղորդել այն կանոնների վերաբերյալ, որին դպիրները պետք է հետևեին Աստվածաշնչի գրքերն արտագրելիս: Հաշվի՛ առ, խնդրում եմ, որ հաջորդ դասի մեջ (Գլուխ 3-րդ)՝ *«Ինչպե՞ս կարող եմ իմանալ, որ Աստվածաշունչն անսխալ (ճշմարիտ) է»,* Մեռյալ ծովի գալարների վերաբերյալ բաժին կա: Դու նաև կարող ես սպասել, մինչև կանցկացնես այդ դասը, եթե այսօր քո դասաժամը չի հերիքում: *«Ճանաչի՛ր քո Աստվածաշունչը»* գրքի 8-11-րդ էջերում նույնպես տեղեկություն կա Աստվածաշնչի ամենավաղ թարգմանությունների մասին:

Մատնանշի՛ր, որ այսօր թարգմանիչներն ունեն հարյուրավոր ձեռագիր մատյաններ եբրայերեն և հունարեն, որոնք օգտագործում են, երբ կատարում են Աստվածաշնչի նոր թարգմանություններ:

11. Անձնական կիրառում:

Այսօրվա անձնական կիրառման համար նորից վերանայե՛ք Աստվածաշնչյան բանալի ճշմարտությունը և Բանալի համարն այս դասի համար: Քաջալերի՛ր նրանց, որպեսզի Աստվածաշնչին վստահելու որոշում կայացնեն և ընդունեն այն որպես Աստծո Խոսք, այլ ոչ թե՝ ընդամենն Աստվածաշունչը գրած հրեա մարդկանց լավ գաղափարներ:

Քաջալերի՛ր նրանց, որպեսզի փնտրեն գործնական ուղիներ՝ Աստվածաշնչի ուսուցումներն ամեն օր իրենց կյանքում կիրառելու համար:

2

12. Հանձնարարություններ:

Ա. Տո՛ւր հարցաշար 2-րդը՝ Ավետարանների, Գործքի և Պողոսի նամակների վերաբերյալ:

Բ. Գնահատակա՛ն դիր Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 2-րդի՝ *«Պատմական գրքեր»,* և Նախագիծ 3-րդի՝ *«Քնարական գրքեր»* բաժինների համար:

Գ. Հանձնարարի՛ր ուսանողներին՝ կարդալ *Ուսանողի ձեռնարկի* 2-րդ գլուխը՝ այսօրվա դասին քննարկված թեմաները վերանայելու համար:

Դ. Հանձնարարի՛ր ուսանողներին՝ կարդալ *Ուսանողի ձեռնարկի* 3-րդ գլուխը՝ հաջորդ դասին նախապատրաստվելու համար:

13. Դասի գնահատում:

Խնդրում եմ, գրի՛ր մտքեր այս դասի բարելավման համար:
Ո՞ր հատվածներն էին լավագույնս աշխատում:
Ո՞ր մասերն էին ուսանողների համար դժվարհասկանալի:
Ի՞նչն ամենաօգտակարը թվաց քո ուսանողներին:

Դաս 3.
Արդյո՞ք Աստվածաշունչն անսխալ է

1. **Աստվածաշնչյան բանալի ճշմարտություն:**

Ես կարիք ունեմ իմ անձնական կյանքում ապացուցելու, որ Աստվածաշնչի ուսուցումները ճշմարիտ են:

2. **Բանալի համար. Մարկոս 4:24.**

«Զգո՛ւյշ եղեք, թե ինչ եք լսում. ինչ չափով որ չափեք, դրանով էլ ձեզ պիտի չափվի»:

3. **Հղում ուսանողական նյութերին:**

Ուսանողի ձեռնարկի 3-րդ գլուխը համապատասխանում է այս դասին:

4. **Դասի ջերմացում. ծարավ մարդու մանրապատում (5 րոպե):**

Նախքան դասը սկսելը ընտրի՛ր երկու հոգու, որ մասնակցեն այս մանրապատմանը: Երկու միանման սափորնե՛ր բեր դասարան: Երկուսն էլ ջրով լցրո՛ւ:

Թող առաջին անձնավորությունը ջրով լի երկու սափորները դնի սեղանի վրա և բացատրի, թե ինչ է անում սափորների ջրի հետ: Սափորներից մեկի մեջ մաքուր ջուր կլինի, իսկ մյուսը մենք կթունավորենք՝ նրանում մի քանի կաթիլ թույն լցնելով: Դրա համար տեխնիկական սպիրտը լրիվ բավարար է:

Մասնակից անձը պետք է բարձրաձայն կարդա տեխնիկական սպիրտի վրայի պիտակը, որը զգուշացնում է, որ այն չի կարելի խմել: Պետք է նաև համարակալի սափորները, որպեսզի իմանա, թե որի մեջ է թույնը: Դրանից հետո նա պետք է նստի ջրի մոտ և սկսի ամսագիր կարդալ:

Այդ պահին մյուս անձնավորությունն է դրսից ներս մտնում և ասում. «Ես ծարավ եմ: Դու խմելու բան ունե՞ս»:

«Այո,- պատասխանում է ջուր ունեցող մարդը,- ես այստեղ ջրով լի երկու սափոր ունեմ: Մեկի մեջ մաքուր ջուր է, մյուսը՝ թունավոր: Եթե ուզում ես խմել, խնդրեմ, համեցի՛ր»: Որից հետո վերցնում է իր ամսագիրն ու շարունակում կարդալ այն:

Ծարավ մարդը վարանում է, հետո վերցնում է երկու սափորներն ու զգուշությամբ նայում դրանց: «Դու կատակում ես, այնպես չէ՞: Ջրի մեջ ոչ մի թույն էլ չկա, այնպես չէ՞»:

«Ոչ, ես չեմ կատակում,- ասում է ամսագրով մարդը,- այդ սափորներից մեկի ջուրը թունավոր է: Ես գիտեմ դա, քանի որ ինքս եմ լցրել թույնը: Սակայն մյուս սափորի մեջ մաքուր ջուր է, այն անուշահամ է: Ես ճի՞շտ լսեցի քեզ, դու ծարա՞վ ես: Օգտվի՛ր»:

«Ինչպե՞ս կարող եմ իմանալ, որ դու ճիշտ ես ասում,- ասում է ծարավ մարդը,- միգուցե դու թույնը լցրել ես երկու սափորներում էլ: Ինչպե՞ս կարող եմ իմանալ, որ դու ինձ ճիշտը կասես, եթե քեզ հարցնեմ, թե դրանցից որ մեկն է անվտանգ: Միգուցե դու մոլագար ես, ով ցանկանում է տեսնել, թե ինչպես են մարդիկ մեռնում»:

3

Առաջին անձնավորությունը մի կողմ է դնում ամսագիրն ու ասում. «Ո՛չ, ես մոլագար չեմ: Այո՛, վստահելի մարդ եմ: Ես սա անում եմ, որպեսզի այս ուսանողներին մի կարևոր դաս սովորեցնեմ: Ես չեմ ստում: Չեմ ուզում, որ դու թունավորվես: Եթե ուզում ես խմել, կարծում եմ, որ պետք է վստահես ինձ»: Բարձրացնելով մաքուր ջրով սափորը՝ նա ասում է. «Ահա՛, խմի՛ր: Սա անվտանգ է խմելու համար»: Հետո երկուսն էլ հեռանում են:

5. Մանրապատումից անցում դասին (2-5 րոպե):

Մենք կարիք ունենք ջուր խմելու, եթե ուզում ենք ողջ մնալ ֆիզիկապես: Սակայն եթե ուզում ենք հոգևոր կյանք գտնել, որը կմնա հավիտյան, ապա պետք է պատրաստ լինենք վստահել Աստծուն, երբ Նա ասում է. «Վստահի՛ր ինձ: Ես քեզ կյանք եմ առաջարկում: Իմ գրավոր խոսքը՝ Աստվածաշունչը, լի է ճշմարտությամբ: Դու կարող ես հավատալ դրան: Վստահի՛ր դրան»:

Բայց մեզնից շատերը հարցնում են. «Ինչպե՞ս կարող եմ իմանալ, որ Աստվածաշունչն անսխալ է: Ինչպե՞ս կարող եմ իմանալ, որ Աստվածաշունչը չի փոփոխվել: Գուցե այն լի է սխալներով: Կարո՞ղ ես դու ապացուցել, որ մարդիկ չեն եղծել Աստվածաշունչը և ձևափոխել այն»:

Այս դասի հիմնական նպատակն է՝ գտնել համոզիչ փաստարկներ, որ Աստվածաշունչը, որ մենք այսօր ունենք, անսխալ է, հուսալի և ճշմարիտ:

6. Անցկացրո՛ւ Ա. կետը՝ Բոլոր մարգարեությունները եղել են ճշմարիտ և անսխալ: Հին Կտակարանի մարգարեությունները (5-10 րոպե):

Սկզբում բացատրի՛ր՝ ի՛նչ է մարգարեությունը: *Ուսանողի ձեռնարկի* 12-րդ էջում տրված է հետևյալ սահմանումը.

1. Աստծո պատգամը՝ ասված քրիստոնյայի միջոցով:
2. Կանխասածություն. Պատգամ՝ տրված Աստծուց, թե ինչ է տեղի ունենալու ապագայում:

Տե՛ս *Ուսանողի ձեռնարկի* 12-13-րդ էջերն այս կետի վերաբերյալ՝ ավելի շատ տեղեկություն ստանալու համար: Թող ուսանողները գտնեն և կարդան

մի քանի մարգարեություններ Հին Կտակարանից, ինչպես նաև կարդան Նոր Կտակարանի այն հատվածները, որտեղ ասվում է, որ դրանք կատարվել են: Մատնանշի՛ր, որ Մեռյալ ծովի գալարները, ապացուցված է, գրվել են Հիսուսի ծննդից մոտ 200 տարի առաջ: Այդպիսով մենք գիտենք, որ այդ մարգարեությունները գրվել են նախքան դրանց իրականանալը:

7. Անցկացրո՛ւ Ա. կետը՝ Բոլոր մարգարեությունները եղել են ճշմարիտ և անսխալ. Նոր Կտակարանի մարգարեությունները (5-10 բապե):

Ավետարանները նույնպես պարունակում են մարգարեություններ, որոնք կատարվել են Հիսուսի մահվան և հարության ժամանակ: Դու կարող ես նաև լրացուցիչ գրականություն գտնել, որոնք ցույց են տալիս աստվածաշնչյան այն բոլոր մարգարեությունների կատարման վիճակագրական անհնարինությունն ու եզակիությունը, որոնք արդեն կատարվել են: Մատնանշի՛ր, որ մինչև հիմա ոչ մի հատիկ մարգարեություն սխալ դուրս չի եկել:

Փաստերը խոսում են Աստվածաշնչի օգտին, որ այն հուսալի է: Աստծո Խոսքին կարելի է վստահել: Երբ այն հավաստում է, որ մահից հետո կյանք կա, և մենք հիմա որոշում ենք, թե որտեղ պետք է անցկացնենք մեր հավիտենությունը, ապա պետք է այդ հարցում լուրջ ուշադրություն դարձնենք մեր արձագանքին:

8. Անցկացրո՛ւ Բ. կետը՝ Աստվածաշունչն ասում է, որ այն Աստծո խոսքն է (3-5 բոպե):

Տե՛ս *Ուսանողի ձեռնարկի* 13-րդ էջը՝ այս կետի վերաբերյալ տեղեկությունների և Սուրբ Գրքի համարների համար: Քո ուսանողները պետք է հասկանան, որ եթե մենք կարողանանք ապացուցել, որ Աստվածաշունչն Աստծո Խոսքը չէ, ապա մենք կանտեսենք դրա ուսուցումները: Սակայն այն հստակորեն պնդում է, որ Աստծո Գիրքն է, ոչ թե պարզապես մարդու գիրք:

9. Անցկացրո՛ւ Գ. կետը՝ Հիսուսն ասաց, որ Աստվածաշունչն Աստծո Խոսքն է (5-10 բոպե):

Տե՛ս *Ուսանողի ձեռնարկի* 13-րդ էջն այս կետի համար՝ Սուրբ Գրքի համարներ և տեղեկություն ստանալու նպատակով: Այս պահին մի՛ խորացիր ընդարձակ տրամաբանական պատճառաբանությունների մեջ: Այնուամենայնիվ, կարող ես կուռ տրամաբանություն կառուցել Հիսուսի վկայության վերաբերյալ: Եթե հնարավոր լիներ ապացուցել, որ Նա մեղավոր է կամ ստախոս, ապա մենք ամեն բան մի կողմ կշպրտեինք: Սակայն եթե այն ամենը, ինչ Նա ասաց, ճշմարիտ է, ապա մենք կարիք ունենք լրջորեն մտածելու Սուրբ Գրքի հանդեպ մեր վերաբերմունքի մասին:

3

10. Անցկացրո՛ւ Դ. կետը՝ Աստվածաշնչում հակասություններ չկան (5-10 րոպե):

Բացատրի՛ր, թե ինչ է հակասությունը՝ համոզված լինելով, որ նրանք հասկանում են, թե ինչի մասին ես այս պահին խոսում: Տե՛ս *Ուսանողի ձեռնարկի* 13-14-րդ էջերն այս կետի վերաբերյալ՝ լրացուցիչ տեղեկությունների համար:

Ցանկության դեպքում կարող ես օգտագործել այս օրինակը՝ ցույց տալու համար, թե ինչպես են մարդիկ սխալվում, երբ եզրակացնում են, որ Աստվածաշնչում իրոք կան հակասություններ կամ սխալներ:

3

Ուսանողներին տո՛ւր այս հարցը. «Մտածե՛ք այն մասին, թե ինչ կլիներ Աստծուն ուղղված ձեր հավատի հետ, եթե ես կարողանայի ապացուցել, որ Աստվածաշունչն ասում է. «Աստված չկա»: Դուք ինձ չե՞ք հավատում: Բացե՛ք և կարդացե՛ք Սաղմոս 14:1»: Թող ուսանողները գտնեն այդ համարը և կարդան այն:

Քննարկի՛ր նրանց հետ այն խնդիրը, որն առաջանում է, երբ մարդիկ առանձնացնում են համարի մի մասը՝ ողջ համատեքստին անդրադառնալու փոխարեն: «Հակասությունների» մեծ մասը, որ մարդիկ ներկայացնում են, կարող են բացատրվել՝ ավելի խորը ուշադրություն դարձնելով, թե ինչ է իրականում ասում Աստվածաշունչը տվյալ հարցի վերաբերյալ:

Քո ուսանողներին զգուշացրո՛ւ այս հարցում մեկ այլ տարածված խնդրի վերաբերյալ: Շատերը, ովքեր մտածում են, որ Աստվածաշունչը հակասություններ է պարունակում, ասում են. «Աստվածաշունչը հակասում է ինքն իրեն»: Նրանք իրենց միտքը շարունակելով՝ քեզ մի «հակասություն» կասեն: Ասա՛ քո ուսանողներին, որ հարցնեն տվյալ անձնավորությանը, թե Աստվածաշնչի մեջ ո՛ր գրքում, գլխում և համարում է այդ հակասությունը նշված: Նրանց մեծ մասը չգիտի դա: Ասե՛ք նրանց, որ ավելի ուշադիր զննեն, թե ինչ է իրականում ասում Աստվածաշունչը:

11. Անցկացրո՛ւ Ե. կետը՝ Հնէաբանությունն ապացուցում է, որ Աստվածաշունչն անսխալ է (10-15 րոպե):

Այս թեման քննարկված է *Ուսանողի ձեռնարկի* 14-15-րդ էջերում: Դու կարող ես քեզ հետ մի քանի գրքեր բերել դասարան, որոնք վերաբերում են այս թեմային, որի համար ապացույցները չափից ավելի շատ են: Մեռյալ ծովի գալարները 20-րդ դարի ամենակարևոր հայտնագործությունն են: Հնարավոր է՝ դուք արդեն քննարկել եք Մեռյալ ծովի գալարներն այս դասընթացի՝ նախկին դասերից մեկի ժամանակ:

Բե՛ր քեզ հետ այդ գալարների նկարները, որպեսզի քո ուսանողներն ուսումնասիրեն դրանք: Վերջին հանրագիտարանները, հատկապես աստվածաշնչյանները, պետք է որ ունենան այդ նկարները: Եթե դու այդպիսի գրքեր չունես, ապա կարող ես դիմել քո հովվին կամ հանրային գրադարան:

12. Անցկացրո՛ւ Զ. կետը՝ Աստվածաշնչի բժշկական խորհուրդներն ապացուցում են, որ այն անսխալ է (5-10 րոպե):

Տե՛ս *Ուսանողի ձեռնարկի* 15-րդ էջը՝ այս կետի վերաբերյալ տեղեկությունների համար: Բժիշկ Ս. Ի. Մաք Միլլենի՝ *«Այս հիվանդություններից ոչ մեկը»* գիրքն ապշեցուցիչ փաստարկներ է ներկայացնում այս հարցի վերաբերյալ: Այս գրքից բե՛ր երկու կամ երեք օրինակներ, թե ինչպես է Աստված հազարավոր տարիներ առաջ բժշկական օրենքներ տվել Աստվածաշնչում, որոնք բժշկագիտության տեսակետից ճիշտ են:

Նշի՛ր, որ այդ ժամանակների ավելի զարգացած քաղաքակրթություններ ունեին բժշկական օրենքներ, որոնք շատ վտանգավոր էին և հաճախ մահվան պատճառ էին դառնում, այլ ոչ թե բժշկելու:

13. Անցկացրո՛ւ Է. կետը՝ Ապացուցի՛ր Աստվածաշնչի ճշմարտացիությունն ինքդ քեզ համար՝ ստուգելով դրա ուսուցումները քո սեփական կյանքում (5-10 րոպե):

Սա միգուցե ամենաուժեղ ստուգումն է, որ կարող է արվել՝ ապացուցելու համար, որ Աստվածաշունչն անսխալ է: Մնացած բոլոր ստուգումները մտավոր մակարդակի վրա են կատարվում: Իսկ այս մեկն, իրոք, անձնական է:

Բե՛ր մի քանի օրինակներ քո անձնական կյանքից, կամ այլ ճշմարիտ քրիստոնյաների, ում դու ճանաչում ես: Ցո՛ւյց տուր, թե ինչպես է Աստվածաշնչի որևէ կոնկրետ ուսուցում ապացուցվել քո կյանքում: Մի՛ օգտագործիր աստվածաշնչյան ընդհանուր ճշմարտություններ: Եղի՛ր կոնկրետ:

Քաջալերի՛ր քո դասարանում մյուսներին՝ կիսվելու անձնական օրինակներով, թե ինչպես են աստվածաշնչյան ուսուցումներն ապացուցվել նրանց կյանքում:

Եթե ցանկանաս, կարող ես նաև հարցազրույց կազմակերպել որևէ հասուն քրիստոնյայի հետ (կամ Թին Չելենջն ավարտած ուսանողներից մեկի հետ, եթե դու այս դասն անցկացնում ես Թին Չելենջի կենտրոններից մեկում): Առի՛թ տուր նրանց՝ կիսվելու անձնական օրինակներով, թե ինչպես է նրանց կյանքում ապացուցվել, որ Աստվածաշունչը ճշմարիտ է:

Տե՛ս *Ուսանողի ձեռնարկի* 15-16-րդ էջը՝ այս թեմայի վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների և համարների համար: Մի բան, որ ուզում ենք ընդգծել, այն է, որ Աստվածաշունչը կախարդական գիրք չէ: Դու չես կարող պարզապես մի համար Աստվածաշնչից մեջբերել և տեսնել, թե ինչպես են հրաշքներ տեղի ունենում:

3

Աստվածաշունչը լի է առօրյա կյանքին վերաբերող գործնական խորհուրդներով: Ղուկաս 6-րդ և Հռոմեացիներին 12-րդ գլուխները լեցուն են գործնական ուսուցումներով, որոնք կարող ենք ստուգել մեր կյանքում: Սակայն հիմնական պատճառը, թե ինչո՛ւ է Աստված այդ ուսմունքները դրել, մարդկանց օգնելն է, որպեսզի ցինիկ մարդկանց համար չլինենք կլինիկական փորձարկման հիմք:

Անօգուտ է պահանջել Աստծուց, որ Նա ապացուցի Իր գոյությունը՝ անելով այն, ինչ մենք ենք Նրան ասում: Նա՛ է Տերը, Նա՛ է Իշխանը: Եթե կա մեկը, որ կարող է պահանջներ դնել, ապա դա Աստված է, ոչ թե մենք: Մատնանշի՛ր, որ հնազանդությունն այս ամբողջ ասպարեզում առանցքային կարևորություն ունի: Մեր շարժառիթները նույնպես շատ կարևոր են:

3

14. Կյանքից կյանք սովորելու՝ աստվածաշնչյան սերտողության պատկերի աղյուսակը (5-10 րոպե):

Դու կգտնես Կյանքից կյանք սովորելու՝ աստվածաշնչյան սերտողության պատկերի աղյուսակն այս Ուսուցչի ձեռնարկի 29-րդ էջում: Այս պատկերը կարելի է օգտագործել՝ կիրառելով Աստծո Խոսքը մեր կյանքում հանդիպող խնդիրների մեջ: Դու կարող ես այն անցկացնել քո ուսանողների համար՝ օգտագործելով որոշ օրինակներ քո կյանքից:

15. Անձնական կիրառում (5 րոպե):

Ա. Դու կարող ես դասի այս բաժինը կապել վերոնշյալ ծրագրի 13-րդ և 14-րդ գործողությունների հետ: Քաջալերի՛ր քո ուսանողներին, որպեսզի ուսումնասիրեն *Կյանքից կյանք սովորելու՝ աստվածաշնչյան սերտողության պատկերն* իրենց կյանքի որոշակի ասպարեզների համատեքստում: Թող նրանք գրեն արդյունքները, թե ինչ տեղի ունեցավ, երբ այդ համարները կիրառեցին իրենց կյանքում:

Բ. Մեկ այլ հարց, որ դու նրանց կարող ես տալ հետագայում խորհելու համար, հետևյալն է. «Ինչպե՞ս պետք է Աստվածաշնչի անսխալականությունն այսօր ազդի իմ կյանքի վրա»: Ահա երեք մտքեր, որոնք կարող են պատասխան լինել այդ հարցին.

1. Ես կարող եմ վստահել Աստվածաշնչին և հավատալ, որ այն, իրոք, Աստծո Խոսքն է:

2. Ես կարող եմ վստահ լինել, որ այն, ինչ ասում է Աստվածաշունչն այսօր, նույնն է՝ ինչ Աստված ասել էր այն մարդկանց, ովքեր առաջինը գրեցին Աստվածաշունչը:

3. Ես պետք է այսօր ուշադիր լինեմ, որպեսզի կիրառեմ Աստվածաշնչի ուսուցումներն իմ կյանքում:

Կյանքից կյանք սովորելու՝ աստվածաշնչյան սերտողության պատկեր

1. Գրի՛ր սթրեսային իրավիճակներ.

   - Իրավիճակներ, որտեղ ես հեշտությամբ եմ ընկնում անհանգստության, հուսահատության, բարկության, գրգռվածության, հուսալքության մեջ, կամ երբ ես ճնշման տակ եմ զգում ինձ:

2. **Աստծուն տո՛ւր** այս հարցը.

   «Աստվա՛ծ, ի՞նչ ես Դու ուզում ինձ սովորեցնել, որ **անեմ այսօր**»:

3. Գտնեմ իմ առօրյա կյանքում մի ասպարեզ, որտեղ ես **ուզում եմ փոխվել.**

   - Օգտագործեմ Ա Կորնթացիներին 13:4-8-ը՝ հայտնաբերելու համար այն հնարավոր ասպարեզները, որտեղ ես կարիք ունեմ աճելու:

4. Կապեմ սա իմ **աստվածաշնչյան սերտողության հետ.**

   - Ի՞նչ է ասում Աստվածաշունչն իմ կյանքի այս ասպարեզի մասին, որտեղ ես ուզում եմ աճել:

5. **Գրել անելիքներ**, որոնք ես կարող եմ ավարտին հասցնել այսօր:

   - Այլ կերպ ասած՝ իմ առջև նպատակներ դնեմ:

   - Դնել մի նպատակ և այն իրականացնել այսօր:

6. **Գնահատեմ** արդյունքները:

   - Նույն օրը՝ ավելի ուշ, կամ հաջորդ օրը, վերանայի՛ր, թե ինչ տեղի ունեցավ, երբ դու փորձեցիր հասնել քո առջև դրած նպատակին:

Այս նույն աղյուսակը կամ դրա այլ տարբերակներն օգտագործված են՝ *Խմբային ուսուցումներ նորադարձ քրիստոնյաների համար* ուսուցման հետևյալ դասընթացներում.

1. Քրիստոնեական պրակտիկա, դաս 2-րդ:
2. Ինչպե՞ս կարող եմ իմանալ, որ քրիստոնյա եմ, դաս 8-րդ և 9-րդ:
3. Ինչպե՞ս ուսումնասիրել Աստվածաշունչը, դաս 2-րդ:
4. Հաջողակ քրիստոնեական կենսակերպ, դաս 2-րդ:

3

16. Հանձնարարություններ:

Ա. Տո՛ւր հարցաշար Նոր Կտակարանի բոլոր գրքերի և դրանց բաժանումների անվանումների վերաբերյալ:

Բ. Գնահատակա՛ն դիր Նախագիծ 5-րդի՝ *«Փոքր մարգարեներ»* բաժնի համար:

Գ. Հանձնարարի՛ր ուսանողներին կարդալ *Ուսանողի ձեռնարկի* 3-րդ գլուխը՝ այսօրվա դասին քննարկված թեմաները վերանայելու համար:

Դ. Թող ուսանողները կարդան *Ուսանողի ձեռնարկի* 4-րդ և 5-րդ գլուխները՝ հաջորդ դասին նախապատրաստվելու համար:

3

17. Դասի գնահատում:

Խնդրում եմ, գրի՛ր մտքեր այս դասի բարելավման համար:
Ո՞ր հատվածներն էին լավագույնս աշխատում:
Ո՞ր մասերն էին ուսանողների համար դժվարհասկանալի:
Ի՞նչն ամենաօգտակարը թվաց քո ուսանողներին:

Դաս 4.
Թռուցիկ հայացք Հին Կտակարանին և Թռուցիկ հայացք Նոր Կտակարանին

1. Աստվածաշնչյան բանալի ճշմարտություն:

Ես պետք է կիրառեմ Աստվածաշունչն իմ կյանքի բոլոր փորձությունների մեջ:

2. Բանալի համար. Բ Տիմոթեոս 3:17. :

«Որպեսզի Աստծո մարդը կատարյալ լինի, ամեն բարի գործի համար պատրաստված»:

3. Հղում ուսանողական նյութերին:

Ուսանողի ձեռնարկի 4-րդ և 5-րդ գլուխները համապատասխանում են այս դասին: *Ուսուցման ուղեցույցի* ցանկացած նախագիծ կարող է օգտագործվել այս դասի հետ:

4. Այս դասի նպատակը:

Այս դասի՝ մեր գլխավոր նպատակն է՝ տալ համառոտ ամփոփում Հին Կտակարանի և Նոր Կտակարանի համար: Մեր ուսանողներից որոշները, հնարավոր է, այնքան էլ լավ պատկերացում չունեն Աստվածաշնչի վերաբերյալ: Եթե նրանք այսօր կարողանան ըմբռնել «ընդհանուր պատկերը», ապա ավելի հեշտ կլինի հասկանալ, թե ինչպես են այդ բոլոր տարբեր գրքերը համապատասխանում Աստծո ծրագրին մեր աշխարհի համար: Դասի վերջում դու հնարավորություն կունենաս քննարկելու, թե ինչ դեր ունի մարգարեությունը մեր ապագայի համար:

5. Համաշխարհային պատմության ժամանակագրությունը:

Դու, ըստ ցանկության, կարող ես օգտագործել համաշխարհային պատմության ժամանակագրությունը՝ ցույց տալու համար, թե ինչ է Աստվածաշունչը մեզ սովորեցնում այս աշխարհի պատմության վերաբերյալ: Այդ ժամանակագրությունը պետք է ներառի.

- Արարչագործությունը
- Ծննդոցի վաղ դեպքերը
- Նոյը և ջրհեղեղը
- Բաբելոնի աշտարակը

4

- Աբրահամի կանչվելը
- Հովսեփը Եգիպտոսում
- Մովսեսը դուրս է բերում հրեաներին Եգիպտոսից
- Իսրայելը դատավորների ժամանակ
- Թագավորներ.
  Սավուղ
  Դավիթ
  Սողոմոն
- Իսրայելի բաժանումը երկու թագավորությունների
- Բաբելոնյան գերության ժամանակաշրջանը
- Իսրայելի վերականգնումը
- Հին և Նոր Կտակարանների միջև եղած 400 տարվա լռությունը
- Հիսուսի կյանքը
- Եկեղեցու հիմնվելը Երուսաղեմում
- Պողոսի առաքելական ճանապարհորդությունները
- Աշխարհի գալիք դեպքերը, որոնք նախապես գրանցված են Հայտնության գրքում:

4

Օգտագործի՛ր ժամանակագրությունը ողջ դասի ընթացքում, որպեսզի ցույց տաս, թե Աստվածաշնչի ո՛ր գիրքը ո՛ր ժամանակաշրջանին է համապատասխանում: Կարիք չկա ունենալ յուրաքանչյուր գրքի ճշգրիտ տարեթիվը քո ձեռքի տակ եղած ժամանակագրության մեջ, սակայն գոնե մոտավորապես ցո՛ւյց տուր այն ժամանակահատվածը, երբ դրանք գրվել են: Համառոտ բացատրի՛ր Աստվածաշնչում տեղ գտած տարբեր գրքերի նպատակները:

6. Հին Կտակարանի ամփոփում (10-20 րոպե):

Ուսանողի ձեռնարկի 17-18-րդ էջերը Հին Կտակարանի վերաբերյալ հիմնական տեղեկություններ են տրամադրում, որոնք կարող են օգտագործվել այս կետում: Համառոտ բացատրի՛ր, թե ինչու է «կտակարան» բառն օգտագործվում Աստվածաշնչի երկու խոշոր բաժանումները նկարագրելու համար: Ա Կորնթացիներին 10:11-ը լավ բացատրություն է տրամադրում, թե ինչո՛ւ է Հին Կտակարանն այսօր մեզ համար կարևոր:

Դու կարող ես նաև հղում անել մի քանի հարցերի այն նախագծերից, որը նրանք լրացրել են *Ուսուցման ուղեցույցում* այս դասընթացի համար:

Նշի՛ր, որ Հիսուսի երկրավոր կյանքի ժամանակ միակ Սուրբ Գիրքը, որ նրանք ունեին, Հին Կտակարանն էր: Մեզ անհրաժեշտ է զգույշ լինել, որպեսզի չթերագնահատենք Հին Կտակարանի արժեքը: Քաջալերի՛ր նրանց,

որպեսզի Հին Կտակարանն այնպես կարդան, որ չձանձրանան: Այս հարցում կարևորը բազմազանությունն է:

Քաջալերի՛ր նրանց, որ կարդան երկուսից էլ՝ և՛ Նոր Կտակարանից, և՛ Հին Կտակարանից, և մի տեսակի գրականությունից անցնեն մյուսին: Քաջալերի՛ր քո ուսանողներին, որ կարդան ամբողջական գրքերով, այլ ոչ թե ամեն օր մի գլխից կամ գրքից տեղափոխվեն մյուսը:

7. Մեկնաբանել Աստվածաշունչը:

Աստվածաշնչի որոշ գրքեր կարող են շփոթեցնող լինել մեկնաբանության հարցում: Գորդոն Ֆին և Դուգլաս Ստյուարտը գրել են *How to Read for All its Worth: A Guide to Understanding the Bible* գիրքը, որը հիանալի խորաթափանցություն է տրամադրում այս հարցում: Գիրքը գրված է սովորական մարդկանց համար, սակայն այն կարող է մի փոքր բարդ լինել քո ուսանողների համար:

8. Նոր Կտակարանի ամփոփում (10-20 րոպե):

Անցկացրո՛ւ Նոր Կտակարանն այնպես, ինչպես անցկացրիր Հին Կտակարանը: Խորհի՛ր, թե ինչպես օգտագործես *Ուսուցման ուղեցույցի,* նրանց նախագծերի մեջ եղած հարցերը:

9. Մարգարեության դերն Աստվածաշնչում (5-15 րոպե):

Համառոտ բացատրի՛ր, թե ինչո՛ւ է Աստված մարգարեություններ դրել Աստվածաշնչի մեջ: Այս դասաժամի համար սա ամենակարևոր կետն է: Շատ անգամ մարգարեությունների վերաբերյալ քննարկումներն ընդամենը ապագա դեպքերի բոլոր մանրամասնությունները հասկանալու փորձեր են: Հենց սկզբից հստակեցրո՛ւ, որ Աստված մարգարեությունները նրա համար չի դրել Աստվածաշնչի մեջ, որպեսզի մենք կարողանանք գուշակել ապագան՝ ինչպես այսօրվա բախտագուշակներն են փորձում դա անել:

Աստված մարգարեությունները դրել է Աստվածաշնչում այս նպատակներով.

1. Ցույց տալ Աստվածաշնչի անսխալականությունը:
2. Հույս տալ քրիստոնյաներին ապագայի համար: Հռոմեացիներին 15:4:
3. Մղել մարդկանց՝ ավելի մոտենալ Աստծուն:
4. Այն ապագան գուշակելու համար չէ:

Ուշադրությո՛ւն դարձրու, թե ինչ պատասխան տվեց Հիսուսը Պետրոսին, երբ նա փորձում էր ապագայի հետ կապված մանրամասնություններ իմանալ

4

Հիսուսից: Տե՛ս Հովհաննես 21:15-24-ը, հատկապես՝ 20-23 համարները: Նկատի՛ր նաև, թե ինչ հեշտությամբ մարդիկ սխալ մեկնաբանություն արեցին Հովհաննեսի ապագայի հետ կապված՝ Հիսուսի ասածի վերաբերյալ: Մենք նույնպես կարող ենք անել նույն սխալը, եթե սկսենք սխալ օգտագործել մարգարեությունը:

10. Անձնական կիրառում (5 րոպե):

Օգտագործի՛ր այսօրվա դասի Աստվածաշնչյան բանալի ճշմարտությունը, որպեսզի ընդգծես, թե որքան կարևոր է մեզնից ամեն մեկի համար՝ օգտագործել Աստծո Խոսքը՝ որպես ուղեցույց մեր ամենօրյա կյանքում: Այն լի է քաջալերանքով, առաջնորդությամբ և զգուշացումներով: Եթե մենք հարգենք այն և հնազանդվենք դրան, կտեսնենք, որ մեր հաղորդակցությունն Աստծո հետ ավելի է խորանում:

4

Մյուս կողմից՝ մենք ուզում ենք հիշել, որ մեր սերն ու բարձրագույն հարգանքը պատկանում է ոչ թե Գրքին, այլ դրա Հեղինակին՝ Աստծուն:

11. Հանձնարարություններ:

Գնահատակա՛ն դիր Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 6-րդի՝ *«Ավետարանները և եկեղեցու պատմությունը»* բաժնի և որևէ այլ նախագծի բաժնի համար, որը նրանք ավարտել են, բայց դու դեռևս չես գնահատել:

12. Դասի գնահատում:

Խնդրում եմ, գրի՛ր մտքեր այս դասի բարելավման համար:
Ո՞ր հատվածներն էին լավագույնս աշխատում:
Ո՞ր մասերն էին ուսանողների համար դժվարհասկանալի:
Ի՞նչն ամենաօգտակարը թվաց քո ուսանողներին:

Դաս 5.
Ստուգարք

1. **Նախաբան:**

   Ներկայացրե՛ք հաջորդ դասընթացը:

   Ա. Բաժանե՛ք Ուսուցման ուղեցույցը կամ այլ նախագծեր, որոնք պետք է լրացվեն՝ նախքան դուք դրանք կուսուցանեք հաջորդ դասընթացի առաջին դասին:

   Բ. Թող ուսանողները բացեն իրենց նոր Ուսուցման ուղեցույցի վերջին էջը: Նրանք այնտեղ կգտնեն *Դասարանական հանձնարարության ցուցակի* չլրացված բլանկի մի օրինակ: Ասացե՛ք նրանց յուրաքանչյուր հարցաշարի, նախագծի և ստուգարքի ժամկետները:

   Գ. Բաժանե՛ք նոր Ուսանողի ձեռնարկը և ասացե՛ք նրանց, թե որ էջն եք ուզում, որ նրանք կարդան՝ նախքան հաջորդ դասը սկսվելը:

2. **Ստուգա՛րք անցկացրեք այս դասընթացի վերաբերյալ:**

3. **Գնահատակա՛ն դրեք Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 8-րդի՝ «Ընդհանրական նամակները և մարգարեության գիրքը» բաժնի համար:**

4. **Եթե դեռ չեք արել, ապա վերադարձրե՛ք այն բոլոր հարցաշարերը և նախագծերը, որոնց դուք գնահատական եք դրել:**

5

Ուսանողի ձեռնարկ

Ուսանողի ձեռնարկը ներառված չէ այս փաստաթղթում, սակայն հասանելի է որպես առանձին փաստաթուղթ:

Ստուգի՛ր՝ «Ինչպե՛ս օգտագործել այս՝ Ուսուցչի ձեռնարկը» բաժնի 5-րդ էջը՝ լրացուցիչ տեղեկությունների համար, և թե ինչպես օգտագործել Ուսանողի ձեռնարկը:

Ուսուցման ուղեցույց

Ուսուցման ուղեցույցը ներառված չէ այս փաստաթղթում, սակայն հասանելի է որպես առանձին փաստաթուղթ:

Ստուգի՛ր՝ «Ինչպե՛ս օգտագործել այս՝ Ուսուցչի ձեռնարկը» բաժնի 5-րդ էջը՝ լրացուցիչ տեղեկությունների համար, և թե ինչպես օգտագործել Ուսուցման ուղեցույցը:

Ստուգարք և Վկայական

Ստուգի՛ր՝ «Ինչպե՛ս օգտագործել այս՝ Ուսուցչի ձեռնարկը» բաժնի 5-6-րդ էջերը՝ լրացուցիչ տեղեկությունների համար, և թե ինչպես օգտագործել Ստուգարքն ու Վկայականը:

Անուն _____ **Թռուցիկ հայացք Աստվածաշնչին**

Ամիս, ամսաթիվ_____ **Ստուգարք, 5-րդ խմբագրում**

Դասարան_____ _____ **դասարան**

Ճիշտ-սխալ հարցեր (յուրաքանչյուրը 1 միավոր)

Ցուցումներ. Դի՛ր __X__, եթե պատասխանը ճիշտ է:
Դի՛ր __O__, եթե պատասխանը սխալ է:

1. ____Աստվածաշնչում կան որոշ հակասություններ:

2. ____Աստվածաշնչի բոլոր գրքերը գրվել են ընդամենը հինգ մարդկանց միջոցով:

3. ____Նոր Կտակարանը սկզբում գրվել է լատիներեն, որպեսզի միայն քրիստոնյաները կարողանային այն հասկանալ:

4. ____Աստվածաշնչի որոշ գրքեր գրվել են այնպիսի մարդկանց միջոցով, որոնք երբեք չեն ծառայել Աստծուն:

5. ____Ծննդոցն առաջին գիրքն է, որ գրվել է Հին Կտակարանում:

6. ____Գրեթե 500 տարի պահանջվեց, որպեսզի Աստվածաշնչի բոլոր գրքերը գրվեն:

7. ____Նոր Կտակարանի որոշ գրքեր գրվել են մինչև Հիսուսի մահանալը:

8. ____Աստվածաշնչի բոլոր գրքերը սկզբում ձեռքով են գրվել:

9. ____Երբ դու Աստվածաշնչի մի որևէ համար ես ուսումնասիրում, պետք է փորձես իմանալ ամբողջ պատմությունը, որի մասն է այն կազմում:

10. ___Հիսուսն այն մարդն է, ով վերջապես ավարտեց Հին Կտակարանի բոլոր գրքերն իրենց տեղերը դնելու գործը:

11. ___Աստվածաշնչի որոշ գրքեր ներշնչված չեն Աստծո կողմից:

12. ___Հիսուսը բառ առ բառ ասաց աշակերտներին, թե նրանք ինչ պետք է գրեն Նոր Կտակարանում:

13. ___Երբ մարդիկ գրում էին Աստվածաշունչը, Աստված շարժում էր նրանց ձեռքը, որպեսզի ոչ մի սխալ չանեին:

14. ___Աստծուց տված որոշ մարգարեություններ սխալ էին:

15. ___Հիսուսը մեզ ասաց, որ Աստվածաշունչը ճշմարիտ է:

Ճիշտ-սխալ հարցեր (շարունակելի):

16. ___Հնէաբանները երկար տարիներ են անցկացրել՝ պեղելով և ուսումնասիրելով այն հնագույն քաղաքները, որոնք գոյություն ունեին (բնակեցված էին), երբ գրվում էր Աստվածաշունչը:

17. ___Մեռյալ ծովի գալարները Հին Կտակարանի որոշ գրքերի պատճեններն են:

18. ___Աստվածաշնչի բժշկական շատ օրենքներ մարդու առողջության համար վնասակար են:

19. ___Քրիստոնյաներն այսօր առանձնապես կարիք չունեն կարդալ Հին Կտակարանը, քանի որ այն գրվել է հրեաների համար՝ նախքան Հիսուսի աշխարհ գալը:

20. ___Աստված մարգարեություններ է դրել Աստվածաշնչում, որպեսզի քրիստոնյաները կարողանան գուշակել ապագան՝ ինչպես ներկայիս բախտագուշակներն ու բախտ բացողներն են անում:

21. ___Հիսուսը, հնարավոր է, երեխա ժամանակ մի քանի մեղքեր գործած լիներ:

22. ___Հին Կտակարանում ոչ մի հրաշք չկա գրանցված:

Բազմակի ընտրությամբ հարցեր (յուրաքանչյուրը 2 միավոր):

Ցուցում. Ընտրե՛ք լավագույն պատասխանը և դրա տառ-թիվը գրեք հարցի առջևում՝ դատարկ գծի վրա: Օրինակ.

1. _____Քանի՞ մարդ է գրել Աստվածաշունչը:
   - Ա. 5 մարդ
   - Բ. 40 մարդ
   - Գ. 60 մարդ

2. _____Ինչքա՞ն ժամանակի ընթացքում է գրվել Աստվածաշունչը:
   - Ա. 200 տարի
   - Բ. 500 տարի
   - Գ. 1000 տարի
   - Դ. 1500 տարի

3. _____Քանի՞ գիրք է գրել Պողոսն Աստվածաշնչում:
   - Ա. 13 գիրք
   - Բ. 10 գիրք
   - Գ. 5 գիրք
   - Դ. ոչ մի

Բազմակի ընտրությամբ հարցեր (շարունակելի):

4. _____Ե՞րբ է Աստված ուզում, որ ես ստուգեմ Աստվածաշնչի ուսուցումները՝ դրանք գործնականում կիրառելով իմ կյանքում:
   Ա. Երբեք
   Բ. Երբեմն
   Գ. Միշտ
   Դ. Միայն կիրակի օրերը

5. _____Ե՞րբ պետք է քրիստոնյաները կարդան Հին Կտակարանը:
   Ա. Երբեք
   Բ. Միայն Նոր Կտակարանը 5 անգամ կարդալուց հետո
   Գ. Ինչ-որ մի ժամանակ

Կարճ պատասխանով հարցեր:

1. Կան _____ գրքեր Աստվածաշնչում: (1 միավոր)

   _____ գրքեր Հին Կտակարանում: (1 միավոր)

   _____ գրքեր Նոր Կտակարանում: (1 միավոր)

2. Ի՞նչ լեզվով է գրվել Հին Կտակարանը: _____ (3 միավոր)

3. Ի՞նչ լեզվով է գրվել Նոր Կտակարանը: _____ (3 միավոր)

4. Մոտավորապես _____ մարդ է գրել Աստվածաշունչը: (3 միավոր)

5. Ո՞վ է Աստվածաշնչի ամենակարևոր անձնավորությունը: _____ (4 միավոր)

6. Ո՞րն է Աստվածաշնչի ամենակարևոր դեպքը (իրադարձությունը): (4 միավոր)

   _____

   _____

7. Բացատրի՛ր, թե ինչ է նշանակում «ներշչվել» բառը, երբ այն օգտագործվում է այս ձևով. «Աստվածաշունչը *ներշնչված* է Աստծո կողմից»: (6 միավոր)

   _____

   _____

   _____

   _____

8. Որո՞նք են այն երկու հիմնական պատճառները, թե ինչո՛ւ Աստված մարգարեություններ դրեց Աստվածաշնչում
(6 միավոր, յուրաքանչյուրը 3 միավոր)

1._____

2._____

9. **Ի՞նչ խորհուրդ կտաս դու:** Դանիելը ճշմարիտ քրիստոնյա չէ: Նա հարցնում է. «Որտեղի՞ց գիտես, որ Աստվածաշունչը ճշմարիտ է»:

Գրի՛ր չորս մտքեր, որ դու կարող էիր ասել նրան՝ ապացուցելու, որ Աստվածաշունչը ճշմարիտ է (8 միավոր, յուրաքանչյուրը 2 միավոր):

1. _____

2. _____

3. _____

4. _____

10. Ներքևում գրի՛ր Նոր Կտակարանի **բաժանումների** և **գրքերի** անվանումները:
(17 միավոր, յուրաքանչյուրը 1/2 միավոր)

Թռուցիկ հայացք Աստվածաշնչին

Ստուգարք, 5-րդ խմբագրում

Պատասխաններ

Էջ 1.

Ճիշտ-սխալ հարցեր

(յուրաքանչյուրը 1½ միավոր)

1. 0 սխալ
2. 0 սխալ
3. 0 սխալ
4. 0 սխալ
5. 0 սխալ
6. 0 սխալ
7. 0 սխալ
8. X ճիշտ
9. X ճիշտ
10. 0 սխալ
11. 0 սխալ
12. 0 սխալ
13. 0 սխալ
14. 0 սխալ
15. X ճիշտ

Էջ 2.

16. X ճիշտ
17. X ճիշտ
18. 0 սխալ
19. 0 սխալ
20. 0 սխալ
21. 0 սխալ
22. 0 սխալ

Բազմակի ընտրությամբ հարցեր

(յուրաքանչյուրը 2 միավոր)

1. Բ
2. Դ
3. Ա

Թռուցիկ հայացք Աստվածաշնչին

Ստուգարք, 5-րդ խմբագրում

Պատասխաններ

Էջ 3.

4. Գ

5. Գ

Կարճ պատասխանով հարցեր

1. 3 միավոր (յուր. 1 միավոր)

   66 գրքեր՝ Աստվածաշնչում
   39 գրքեր՝ Հին Կտակարանում
   37 գրքեր՝ Նոր Կտակարանում

2. 3 միավոր – եբրայերեն

3. 3 միավոր – հունարեն

4. 3 միավոր – 40

5. 4 միավոր – Հիսուս Քրիստոս

6. 4 միավոր
   Հիսուս Քրիստոսի մահն ու հարությունը

7. 6 միավոր (առաջարկվող պատասխան)
   Սուրբ Հոգին է առաջնորդել այդ բոլոր մարդկանց մտքերը այնպես, որ նրանք գրել են այն, ինչ Աստված էր ուզեցել, որ գրեն:

Թռուցիկ հայացք Աստվածաշնչին
Ստուգարք, 5-րդ խմբագրում
Պատասխաններ

Էջ 4.

8. 6 միավոր (յուրաքանչյուրը 3 միավոր)
Միայն 2 պատասխան է պահանջվում
(առաջարկվող պատասխաններ)

- Ապացուցել Աստվածաշնչի ճշմարտացիությունը:
- Հուսադրել քրիստոնյաներին:
- Մղել մարդկանց՝ ավելի մոտենալ Աստծուն:
- Դրանք ապագան գուշակելու համար չեն:

9. 8 միավոր (յուրաքանչյուրը 2 միավոր)
(առաջարկվող պատասխաններ)
(միայն 4 պատասխաններ են պահանջվում)

- Բոլոր մարգարեությունները եղել են ճշմարիտ և անսխալ:
- Աստվածաշունչն է ասում, որ այն Աստծո Խոսքն է:
- Հիսուսն ասաց, որ Աստվածաշունչն Աստծո Խոսքն է:
- Աստվածաշնչում հակասություններ չկան:
- Հնէաբանությունն ապացուցում է, որ Աստվածաշունչն անսխալ է:
- Աստվածաշնչի բժշկական խորհուրդներն ապացուցում են, որ այն անսխալ է:
- Ես կարող եմ ապացուցել, որ Աստվածաշունչը ճշմարիտ է՝ իմ սեփական կյանքում ստուգելով դրա ուսուցումները:

10. 17 միավոր (յուրաքանչյուրը 1/2 միավոր)
Տե՛ս *Ուսանողի ձեռնարկի* 16-րդ էջը՝ Նոր Կտակարանի գրքերի և դրանց բաժանումների անվանումների համար:

Շնորհավորում ենք

_____

-ին, առ այն, որ նա ավարտել է

Թռուցիկ հայացք Աստվածաշնչին

դասընթացի ուսումնական պահանջները:
Մենք գնահատում ենք Ձեր մասնակցությունը այս դասընթացին և հուսով ենք, որ Դուք հաջողությամբ կշարունակեք Ձեր կյանքում կիրառել այն աստվածաշնչյան ուսուցումները, որոնք դուք սովորել եք այս դասընթացի ընթացքում:

Ուսուցիչ _____

Ամիս, ամսաթիվ _____

Շնորհավորում ենք

_____

-ին, առ այն, որ նա ավարտել է

Թռուցիկ հայացք Աստվածաշնչին

դասընթացի ուսումնական պահանջները:
Մենք գնահատում ենք Ձեր մասնակցությունը այս դասընթացին և հուսով ենք, որ Դուք հաջողությամբ կշարունակեք Ձեր կյանքում կիրառել այն աստվածաշնչյան ուսուցումները, որոնք դուք սովորել եք այս դասընթացի ընթացքում:

Ուսուցիչ _____

Ամիս, ամսաթիվ _____